

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

82

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Դաւիթ Անյաղթի
անտիպ մէկ ճառը: Քննութիւն եւ քնա-
գիր: (Շար. եւ վերջ) 89

ԴԻՍԱՐԴԻՍԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հա-
յոց Ազգութամասոյցին (շար.) 95

ՊԱՏՄԱԿԱՆ

ՔԻՐՈՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Նորագիւտ նիւ-
թեր Պոսէանց կամ Խաղրակեանց մա-
սին 101

ՀԱՆԱՆԵԱՆ Ս. — Հայոց աշխարհի գրչա-
գրերի ամենահարուստ Մատենադարա-
նի Հաղարատի Ս. Նշան վանքի ողբեր-
գական վախճանը 1778-1799 թթ. եւ Ս.
Էջմիածնի վանքի վաւերագրերի ան-
խիղճ ոչնչացումը Հաղարատում, 1842 թ. 107

ԼԵՃՈՒԱԿԱՆ

Feydit Frédéric — Cambiamenti di strut-
tura del verbo armeno - Tempi, Modi
e aspetti in armeno. 111

ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. Ն. — Ի սէր «Մեծա-
սքանչ»ին 133

ԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Տիրամօր ա-
նունը (Թրգմն.) 124
— Նոյնութիւն տեղեւոր 125
— Ծաղիկներու հոգին 125
— Տիրութիւն աչքերու 126
— Սրտի մուրացկան 126

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՇԱՀԱԶ ՍՏԵՓԱՆ. — Գրեգոր Զօհրապի
Նորավայելքու Լիակատար Ժողովածուն 129
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. Ն. — Գերպօ. Յովհ.՝
Արքեպիսկոպոսի Յովհ.՝ 130
— Խաթալի Պալլադեանի «Նոր տեսութիւն
Հայերէնի ստուգաբանութեան» 131

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳՐԱՆԳ

*** ՎԷՏ. Վաղդէն Ա. Կաթողիկոս Ս. Ղա-
զարի մէջ 118
*** Պուշկին Արթուր Միլիթարեան Նոր վար-
ժարանը 127

PHILOLOGIE

Ananian P. Paul - Une homélie inédite
de David l'Invincible (étude et texte) . 89

LITURGIE

Hatsouni P. Vardan. - Histoire du Bréviai-
re arménien (suite) 95

HISTOIRE

Kurdian Harouthioun - Nouvelles matières
autour de la famille Broshian ou
Khaghbakian 101
Hananim S. - La fin tragique de la colle-
ction des manuscrits du célèbre mona-
stère de la S.te Croix de Haghbat en
1778-1799, et la destruction cruelle des
documents d' Etchmiadzin à Haghbat
en 1824 107

LINGUISTIQUE

Feydit Frédéric - Cambiamenti di struttu-
ra del verbo armeno: Tempi, Modi e
aspetti in armeno 116
Der Nersessian P.N. - Pour l'amour de
Medzaskantch 133

LITTÉRATURE

Hovhannessian P. Vahan - Nom de la
Sainte Vierge 124
— Identité des désirs 125
— L'âme des fleurs 125
— Tristesse des yeux 126
— Mendiant des cœurs 126

RECENSIONS

Chahbaz Stépan - Les œuvres complètes de
Krikor Zohrab 129
Der Nersessian P. N. - Les mémoires de
Mgr. Jean Naslian 129
— Une nouvelle théorie de l'étymologie
arménienne 131

ECHO ARMENIEN

*** - La visite du Katholikos Vazken Ier
à St. Lazare 118
*** - Un nouveau Collège Mekithariste
à Buenos - Aires 127



1843 - 1956
ՃԺԴ. ՏԱՐԻ

ԹԻԻ 4 - 5
ԱՊՐԵԼ - ՄԱՅԻՍ

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIV^e année, 1956, N. 4-5 Avril - Mai

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹԻ

ԱՆՏԻՊ ՄԷԿ ՋԱՌԸ

(Շար. տե՛ս «Բազմավէպ» 1956, թ. 3, էջ 63)

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՆՁԸ

Եկեղեցւոյ, ինչպէս նաեւ խաչի ճառե-
րուն վերնագիրները կը կրեն Դաւիթ Ան-
յաղթի անունը: Խաչի ճառին մէջ միշտ
Փիլիսոփայ տիտղոսն ալ աւելցուած է,
կրեան նաեւ Ներգինացի մակղիրը: Ահա
խաչի ճառին, ինծի ծանօթ ութ օրի-
նակներու վերնագիրները, թուականի կար-
գով.

- 1) 1215 էն. Դաւիթ Անյաղթ փիլիսո-
փայի Ներգինացւոյ ներբողեան ի
սուրբ խաչն աստուածընկալ: (19)
- 2) 1223 էն. Դաւիթ փիլիսոփայի Ներ-
բողեան ի սուրբ խաչն աստուած-
ընկալ: (20)
- 3) 1251-88 էն. Դաւիթ Անյաղթ փիլի-
սոփայի ասացեալ ներբողեան ի
սուրբ խաչն աստուածընկալ: (21)
- 4) 1323 էն. Դաւիթ Անյաղթ փիլիսո-
փայի Ներբողեան ի սուրբ խաչն
աստուածընկալ: (22)
- 5) 1323 էն. Դաւիթ Անյաղթ փիլիսո-
փայի ներբողեան ի սուրբ խաչն
աստուածընկալ: (23)

- 6) ԺԵ. դարէն. Դաւիթ Հ(եր)ացւոյ, Ան-
յաղթ փիլիսոփայի ասացեալ Ներ-
բողեան ի սուրբ խաչն աստուած-
ընկալ: (24)
 - 7) 1637 էն. Դաւիթ Անյաղթ փիլի-
սոփայի Ներգինացւոյ, Ներբո-
ղեան ի սուրբ խաչն աստուած-
ընկալ: (25)
 - 8) 1737 էն. Դաւիթ Անյաղթ փիլի-
սոփայի Ներգինացւոյ Ներբողեան
ի սուրբ խաչն աստուածընկալ: (26)
- Այս ցուցակէն յայտնի կ'երեւի որ
Դաւիթ փիլիսոփայ ունի երկու մակղիր-

- 19) Ս. Ղազարու Մատ. Զեռ. թ. 1553, թղ. 370ա.
(Հմտ. Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ, Բ.
էջ 168):
- 20) Ս. Ղազարու Մատ. Զեռ. թ. 271 թղ. 342բ.
- 21) Ս. Ղազարու Մատ. Զեռ. թ. 1002, թղ. 7. (Հմ.
Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ, Բ. էջ 169):
- 22) Ս. Ղազարու Մատ. Զեռ. թ. 998, թղ. 275բ.
- 23) Տաշեան, Յուցակ Զեռագրաց Մատենադարանին
Միլիթարեանց ի վիճնա, 1895, էջ 806, Զեռ.
թ. 353, թղ. 69ա.
- 24) Տաշեան, Յուցակ, Անդ, էջ 11, Զեռ. թ. 2, թղ.
195ա.
- 25) Ս. Ղազար Մատ. Զեռ. թ. 512. թղ. 464ա (Հմ.
Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ Բ, էջ 103):
- 26) Ն. Պողարեան, Երուսաղէմ, Մայր Յուցակ, Բ, էջ
58, Զեռ. թ. 154, թղ. 39.

ներ, Անյադր եւ Ներգիւնացի, որ զինքը
լու կը զատեն ուրիշ Դաւիթ Փիլիսոփայէ
մը՝ ապրած է. դարուն երկրորդ կէսին,
և կոչուած Հարքացի: Այս վերջինիս
անունով գոյութիւն ունին թէ իմաստա-
սիրական եւ թէ զուտ դաւանարանական
գրութիւններ: Այսպէս են հետեւեալները.
Դաւթի Հարքացոյ եւ Փիլիսոփայի որ
յիմաստասիրական եւ յիմաստասիրիկ
հարցուածս:(27)

Դաւթի Փիլիսոփայի բան հաւատոյ ընդ-
դէմ հերձուածողաց:(28)

Նորին Դաւթի ի հրամանէ Անաստասու
հայոց կաթողիկոսի:(29)

Նորին ի խնդրոյ Աշոտոյ պատրկի:(30)

Վերջին երեք դաւանարանական գրու-
թիւններն ալ Դաւիթ Հարքացիին ըլլալը
ապացուցած է Գ. Յովսէփեան իր յիշեալ
ուսումնասիրութեան մէջ, գտնելով Ստե-
փանոս Սիւնեցիի մէկ գրութեան մէջ՝
Հարքացիի անունով վերի գրութիւններէն
եղած մէջբերութիւն մը:(31)

Արդէն եր-
կու Դաւթներու գրութիւնները իրենց
լեզուով եւ ոճով այնքան կը տարբերին՝
որ դժուար է նոյնացնել անոնց հեղինակ-
ները: Այսու խաչի ճառի եւ Եկեղեցւոյ
ժողովին հեղինակ Դաւիթ Անյադր փիլիսո-
փան յայտնապէս զանազանած կ'ըլլանք
է. դարու վերջերը ծագեալ ուրիշ Դաւիթ
Փիլիսոփայէ մը, որ Հարքացի մակղորով
ծանօթ է: Դաւթի անունին կապուած են
նաեւ իմաստասիրական գործերու շարք
մըն ալ, որոնցմով ներկայիս զբաղելու
գիտաւորութիւն չունինք:

ԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ

Խաչի ճառին յիշատակարանը, որ յե-
տին դարու գրութիւն է, ըսելէ վերջ թէ
«Եւ եղեւ այս ի ժամանակ մարգա-
տան վահանայ», կ'աւելցնէ «Սուտ
ասեն զայլ պատճառսն յԱթէնս կամ ի
Բիզանդիոն կամ յԵրուսաղէմ կամ յոր-
ժամ ի Պարսից դարձաւ խաչն եւ խո-
սեցաւ. իսկ այս առանց կարծեաց է»:(32)

Ուրեմն յետին դարերուն՝ զանազան կար-
ծիքներ կային յիշեալ գրութեան տեղւոյն
շուրջ: Ն. Շնորհալի արդէն կը կարծէր

որ ան Աթէնքի կամ Կ. Պոլսոյ մէջ խո-
սուած ըլլայ:(33) Ինչ որ մեր յիշատա-
կարանը բացէ ի բաց կը մերժէ: Կար-
նաեւ կարծիքը թէ Երուսաղէմի մէջ խո-
սուած ըլլայ, որուն արձագանգ կրնայ
ըլլալ նաեւ Եկեղեցւոյ ճառին վերնագիրն,
համաձայն Ս. Ղազարու մատենադարանի
թիւ 239 ճառընտրին. բայց Երուսաղէմի
օրինակին վերնագիրը այդ հարցը կը
լուծէ, վասն զի հոն նման յիշատակու-
թիւն մը չկայ: Իսկ խաչի ճառին համար
ալ ըսուածը չի կրնար ճշմարտ ըլլալ.
նկատած որ ճառին մէջ կայ ակնարկ
մը որով Երուսաղէմէն հեռու խօսուած
ըլլալը կը յայտնուի. «Արդ ասելով խաչ
աստ իմասցի Գողգոթայ եւ աստէն խա-
չելութիւն»:(34) Խօսքը եզրակացութիւնն
է այն փաստարկութեան՝ թէ Գաղատա-
ցիները Քրիստոսի խաչելութեան մասին
Պողոս առաքեալին քարոզութիւնը լսած
ըլլալով՝ զրեթէ տեսած կ'ըլլային Քրիս-
տոսի խաչելութիւնը. այսպէս ալ խաչը
տեսնելով, կ'եզրակացնէ Դաւիթ, տեսած
կ'ըլլանք Գողգոթան եւ խաչելութիւնը:
Ուրեմն Գողգոթան հեռուոր կը նկատուի:

Վերջին կարծիք մըն ալ այդ ճառին
գրութեան ժամանակը կը համարի Ս.
Խաչի Պարսկաստանէն՝ Հերակլ կայսեր
ձեռքով, դարձին ատենը. եթէ այս կար-
ծիքը ստոյգ ըլլար՝ անոր գրութեան
թուականը կրնար լաւ պատշաճիւ մեկ
եզրակացութիւններուն: Սակայն ամբողջ
ճառին մէջ ոչ մէկ ակնարկ կայ այդ
պատմական մեծ եղելութեան մասին,
մինչ ժամանակակից գրողներ այնքան

- 27) Գ. Տէր Մկրտչեան, Դաւիթ Հարքացի, Արարատ
(1902) ԼԵ, էջ 937-973, 2-րդ. Հ. Բ. Սարգիսեան
- 28) Գ. Յովսէփեան, Դաւթի Փիլիսոփայի Բան Հա-
ւատոյ ընդդէմ հերձուածողաց. Արարատ (1906)
ԼԹ, էջ 261-268.
- 29) Անդ. էջ 269.
- 30) Անդ. էջ 270.
- 31) Գ. Յովսէփեան, Դաւիթ Փիլիսոփայ Հարքացի Ի.
դարու մատենագիր, Արարատ (1907) Խ, էջ 286.
- 32) Դաւիթ Անյադր, Մատենադրութիւնը, էջ 102.
- 33) Ն. Շնորհալի, Մեկնութիւն Բարձրացուցէք ճառին,
Հատուածներ Մ. Չամչեանէն, Պատմութիւն Հայոց
Վնեաիկ, 1784, Ա. էջ 783-4.
- 34) Դաւիթ Անյադր, Ճառի սուրբ խաչն, Անդ. էջ. 109.



1598-74

խանդավառութեամբ կ'անդրադառնան այդ
պատմական մեծ դէպքին վրայ, որ բրի-
տոնեաներու համար իսկապէս ուրախու-
թեան ճշմարիտ առիթ մը եղաւ:

Հետեւեալը կը կարծենք թէ խաչի
ճառը եւ ոչ ալ այդ առթիւ գրուած ը-
լայ, այլ մանաւանդ թէ անկէ առաջ:
Իսկ Եկեղեցւոյ ճառը. խօսուած է խաչի
ճառէն վերջ, քանի որ անոր վրայ կ'ան-
դրադառնայ եկեղեցւոյ ճառին մէջ, ինչ-
պէս վերը տեսանք: Եկեղեցւոյ ճառն ալ
խօսուած է տօնի մը առթիւ, եւ այն՝
հաւանաբար Գրիգոր Լուսաւորչի վերա-
պէն ելքին յաջորդող Եկեղեցւոյ տօնին
առթիւ. վասն զի ճառին մէջ զարնան
վրայ ակնարկ կայ եւ յատուկ կերպով
կը յիշուի Գրիգոր Լուսաւորչի վերապ
մտնելն ու ելքը Փրկչին նման, եւ Եկե-
ղեցւոյ մասին ունեցած տեսիլքը. մէկ
խօսքով՝ Ազաթանգեղոսի մէջ Գրիգոր Լու-
սաւորչի եկեղեցիները շինելու մասին
պատմուածքներու ամփոփոյթը կը կատա-
րուի:

Այս տեսակէտով՝ Եկեղեցւոյ ճառը
հնագոյն գրութիւններէն մէկը կ'ըլլայ
Ազաթանգեղոսի գրքին կամ պարունա-
կութեան վկայողներէն: Նոյն ճառին մէջ
կը յիշուին նաեւ Գրիգոր Նազիանզացիի
կը յիշուին նաեւ Գրիգոր Նազիանզացիի
ճառերէն հատուածներ ալ, ինչ որ կրնայ
նպաստել Գրիգոր Աստուածաբանի ճա-
ռերու թարգմանութեան թուականին ու
ընդման համար:

Լեզուական տեսակէտէն ալ Եկեղեցւոյ
ճառը ունի նորութիւններ, գտնէ բարդու-

թիւններու մէջ. այսպէս հետեւեալ բար-
դութիւնները, որոնք չեն գտնուիր հայ-
կագեան Բազրքիին մէջ. քարձրագունան,
կորսնաւանգեան, ոսկեփողեան, ոստանա-
տեան, կենահրաւէր, ձորձատարած, մերա-
կայ, յիշատակախորհր, այնպակ, վերա-
տրոնեմ, քոյարացեալ: Սակայն իմաստ-
ները պարզ եւ յայտնի են:

*
*
*

Այստեղ կը հրատարակենք Դաւիթ
Անյադրի Եկեղեցւոյ նուիրուած ներդո-
ւանը, որուն մասին խօսեցանք. թէպէտ
իր ներկայ վիճակին մէջ՝ կիսատ կը
թուի ըլլալ: Ներկայ հրատարակութիւնը
կը կատարենք մեր մատենադարանի թիւ
239 ճառընտրի վրայէն, որ մեր քով
գտնուած միակ օրինակն է յիշեալ ճառին:
Մինչ ճառին վերնագիրը լաւ համա-
րեցանք Երուսաղէմի օրինակին համա-
ձայն դնել, որ աւելի հարազատ կը թուի
ըլլալ: Իսկ բնագրին մէջ ինչ ինչ սրբա-
գրութիւններ կատարեցինք երբ օրինա-
կութեան յայտնի սխալներ էին, ստորեւ
դնելով օրինակին ընթերցումը. Օ նշա-
նակելով հրատարակութեան օրինակը:
Համառօտագրութիւններ, որոնք շատ քիչ
էին, լրացուցինք առանց նշանակելու,
վասն զի ընդհանրացած և յայտնի էին
ինչպէս րի, րե, րր, սր, Ած ձեւերը.
ընդհակառակն աւ=օ երկբարբառը թո-
ղուցինք եղածին պէս:

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

